

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՄԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ ԵՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

2000 թուականին տօնախմբուած մեծ յորելեաններու շարքին են Քրիստոսի ծննդեան 2000ամեակը, Հայոց պետականօրէնքը խստօնէութեան ընդունման 1700ամեակը եւ Մխիթարեան միաբանութեան 300ամեակը:

Այս երեք յորելեաններու թուականին մասին տարակարծութիւնները շատ են: Առանց խորանալու Քրիստոսի ծննդեան թուականին շուրջ, բանասիրական աշխարհին քաջայայտնի է Ս. Գրիգոր Լուսաւորիչի ձեռքով Տրդատի մկրտութեան թուականին շուրջ ծագած հարցերը: Բայց այս բոլորը զարմանք պիտի չարուցանեն երբ մտածենք որ ո՛չ թէ 2000 կամ 1700 երկար տարիներ, այլ միայն 300 տարի առաջ տեղի ունեցած դէպքի մը թուականը ճշտելը առ այսօր դժուարութիւններ կը յարուցանէ եւ տարբեր կարծիքներու դուռ կը բանայ, յատկապէս այն պարագային՝ երբ այդ թուականը կը վերաբերի ընկերակցութեան մը, կրօնական միաբանութեան մը հիմնադրութեան՝ որ կը շարունակէ ապրիլ մեր օրերուն:

Տարակարծութիւնը կը ծագի երկու թուականներու միջեւ. 1700 թէ 1701:

Տարբեր հրատարակութիւններու մէջ, ընդհանրապէս 1701ը կը նշուի, մինչդեռ 1700 թուականը վերջին յիսնամեակի գիւտն է:

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ 1701ԻՆ

1701 թուականը որպէս հիմնարկութեան թուական՝ գրականութեան մէջ առաջին անգամ լոյս կը տեսնէ Ս. Ղազարի տպարանէն 1810-ին հրատարակուած «Պատմութիւն կենաց եւ

վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ Րաբունապետի եւ Աբբայ» գիրքին մէջ, աշխատասիրութեամբ Հ. Ստեփանոս Ագոնց Աբբազօր, որ երրորդ յաջորդն էր Մխիթարի:

Հեղինակաւոր կարծիք կը կազմէ այս աշխատութիւնը որ հիմնարկութեան մասին մատեանին կցուած ժամանակագրական ցուցակին մէջ կը նշէ.

«1701 ՌՃԺ Ժողովեալ գաշակերտսն ի պէկօղլի ի տան միում՝ սկիզբն առնէ միաբանութեանն: Թաֆչի յերեսաց հալածանացն: Առաքէ գաշակերտս իւր ի Մօռա: Իսկ ի 8 սեպտեմբերի մօրին ամի՝ մուիրի իւրովքն հանդերձ յորդեգրութիւն աստուայծամօր կուսի»¹:

Այս տեղեկութիւնը կրկնուած կը տեսնենք 1901-ին երկհարիւրամեայ յոբելեանի առիթով աշխարհաբար լեզուով հրատարակուած «Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ» գիրքին մէջ, որու հեղինակն էր Հ. Յովհաննէս Վրդ. Թորոսեան, որ յառաջաբանին մէջ կ'ըսէ.

«Ամբողջ գործս, որ շատ ընդարձակ չէ, եւ պարզ ռճով գրուած ըստ կարելւոյն, երեք մասերէ կը բաղկանայ: Առաջնոյն մէջ՝ նկարագրուած է Մխիթարայ առանձնական կեանքը, սկսեալ իրեն ծննդեմէն մինչեւ Միաբանութեան հաստատութիւնը (1676-1701): Երկրորդին մէջ՝ իրեն հրապարակական կամ գործունեայ կեանքը, Միաբանութեան հիմնարկութեան մինչեւ Հիմնադրին մահը (1701-1749): ...»²:

Իսկ երկրորդ գլուխի վերնագրին մէջ կը գրէ.

«Մխիթար կ'առաջարկէ աշակերտաց արեւմուտք անցնելու խորհուրդը. — Ս. Աստուածածնայ Ծննդեան տօնին (1701ին սեպտ. 8ին) կը հիմնէ Միաբանութիւնը եւ կը մուիրէ Ս. Կուսիմ...»³:

1 Ա.ԳՈՆՑ Է. ՄՏԵՓԱՆՈՍ, Պատմութիւն կեանց եւ վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ թարգմապետի եւ արքայի, Ս. Ղազար, Վենետիկ 1810, էջ 303:

2 ԹՈՐՈՍԵԱՆ Է. ՅՈՎՀԱՆՆԷՍ, Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ, Ս. Ղազար, Վենետիկ 1901, էջ 7:

3 ԱՆՂ, էջ 158:

Նոյնպէս, մատենին կցած ժամանակագրական ցուցակին մէջ կը գտնենք հետեւեալ տեղեկութիւնը.

«1701 սեպտ. 8. Հաստատութիւն միաքանութեան՝ Աստուածամօր պաշտպանութեան ներքեւ»⁴:

Այս համոզումը իր գազաթնային հաստատումը կը գտնէ երկհարիւրամեայ տօնակատարութիւններով որ տեղի ունեցան 1901ին, թէ՛ Վենետիկի եւ թէ՛ Վիեննայի մէջ:

Այդ առիթով լոյս տեսած «Մխիթար» բացառիկ հատորին մէջ կը գտնենք.

«Մխիթար իր անդրանիկ աշակերտաց խումբին մէջ կանգնած, 1701ին կը յայտնէ միաքանութեան հիմնարկութեան միտքը եւ նպատակը: Նա կը ցաւի որ ստիպուած է Հայաստանէն դուրս՝ օտար աշխարհի մէջ հաստատել միաքանութիւնը»⁵:

Վիեննայի պաշտօնաթերթ՝ «Հանդէս Ամսօրեայ»ի Սեպտեմբերի համարը կը սկսի «8 Սեպտեմբեր 1701-1901 Սեպտեմբեր 8. Մխիթարեան միաբանութեան երկդարեան յօբելեանը» յօդուածով որով մէջ կը գտնենք.

«1701ին Սեպտեմբեր 8ին... ի Կոստ.պոլիս Կնգդակրաց (Կապուչինաց) վանքն իւր ընկերները ժողկնց եւ զանոնք ուխտիւ Ս. Աստուածածնայ որդեգիր ըրաւ, անոնց անուն տալով՝ Որդեգիր Կուսին Վարդապետ Ապաշխարութեան. եւ այս նշանաբանին սկզբնատուերն իւր նորահաստատ Միաքանութեան կնքոյն վրայ դրոշմեց քանի մ'ուրիշ խորհրդական նշաններով»⁶:

«Յուշարձան» ժողովածոյին եւ «Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան Միաբանութեան գրական գործունէութեան վրայ» գրքոյկին մէջ այսպէս կը հաստատուի.

«Այս եղանակաւ կ'ըլլայ Մխիթարեան Միաքանութեան սկզբնաւորութիւնը ի Կ. Պոլիս, 8 Սեպտեմբեր 1701, Ս.

4 Անդ., նշ. աշխ., էջ 482:

5 Բացառիկ Բազմավէպ «ՄխիթԱՐ», Մխիթարեան Յօբելեան 1701-1901, ՄԹ (1901), թիւ 9, էջ 21:

6 Մխիթարեան Միաքանութեան Երկդարեան Յօբելեանը, ի Հանդէս Ամսօրեայ, Ժե (1901), թիւ 9, էջ 258:

Աստուածածնի ծննդեան տօնին: Այս օրն ի յիշատակ անմոռաց, մինչեւ ցայսօր միշտ փառաւորութեամբ տօնած է Միաբանութիւնը՝ ի Վեմետիկ եւ ի Վիեմնա»⁷:

Այս երկու աշխատութիւններու գլխաւոր խմբագիրը, Ակիւնեան Հ. Ներսէս, հեղինակութիւն կը կազմէ 1701 Սեպտեմբեր 8 թուականը հաստատողներու շարքին, եւ իր այս կարծիքը կ'արտայայտէ իր յօդուածին մէջ, գրելով.

«1701 սեպտեմբեր 8ին ի մի հաւքեց իր աշակերտները: Պարզեց անոնց առջեւ քաղաքական եւ քաղաքային կացութիւնը. ազգին ներքին վրդովումը: Օսմանեան տիրապետութեան տակ Միաբանութիւն մը կազմելու անհնարութիւնը:... Միիթար քացատրեց անոնց Միաբանութեան նպատակը, ... յանձնեց պաշտօնապէս իր Միաբանութիւնը Աստուածամօր պաշտպանութեան. անուանեց միաբանները Որդեգիր Կուսի: Միաբանութիւնը տակաւին իր սկզբնաւորութեան մէջ է, ըսաւ, ...»⁸:

Միիթար Աբբահօր սրբադասման դատին պատասխանատուութիւնը 1914ին կը յանձնուի Հ. Մինաս Նուրիխանին, որ իտալերէն եւ անգլերէն լեզուներով շարադրուած «Վարք»ին մէջ, հետեւելով նախորդներուն, արդէն աւանդութիւն դարձած 1701 սեպտեմբեր 8 թուականը կը նշէ որպէս հիմնադրութեան թուական⁹:

Այս կարծիքը գրականութեան մէջ շարունակ կրկնուած կը տեսնենք, թէ՛ մենագրութիւններու եւ թէ՛ զանազան յօդուածներու մէջ:

7 Յուշարձան, Գրական ժողովածոյ առթիւ 100ամեայ յոբելիմի հաստատման Միիթարեան Միաբանութեան ի Վիեմնա (1811-1911), Միիթարեան Տպարան, Վիեննա 1911, էջ 3: Ակնարկ մը Վիեմնական Միիթարեան Միաբանութեան գրական գործունէութեան վրայ, Միիթարեան Տպարան, Վիեննա 1912, էջ 3:

8 Ա.ԿԻՆԵԱՆ Է. ՆԵՐՍԷՍ, Միիթար Սեբաստացի, Ի Հանդէս Ամսօրեայ, Կգ (1949), թիւ 4-12, էջ 390:

9 Հմմտ. NURIKHAN P. MINAS, *Il servo di Dio abate Mechitar*, S. Lazzaro, Venezia 1914, pp. 17, 104, 112:

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ 1700ԻՆ

Հ. Պողոս Վրդ. Անանեան, Ընդհանրական Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան, 1 Մարտ 1980ին թէեւ հպանցիկ, սակայն հեղինակաւոր կերպով կը հաստատէ 1700 թուականը որպէս միաբանութեան հիմնարկութեան թուական, գրելով.

«1700ի սկիզբներուն՝ երբ Պոլսոյ մէջ ծնունդ կ'առնէր Մխիթարեան Միաբանութիւնը...»¹⁰:

Հ. Սահակ Վրդ. Զեմճեմեան, աւելի յստակօրէն կը գրէ.

«Կ'անցնին քանի մը տարիներ, ու 1700ին Մխիթար Պոլսոյ մէջ կը հիմնէ Միաբանութիւնը»¹¹:

Բարձրաշնորհ Հ. Ներսէս Արք. Տէր-Ներսէսեանն ալ համակարծիք է 1700 թուականին, եւ շուտով, ինչպէս մեր խօսակցութեան ժամանակ յայտնեց, յօդուած մը լոյս պիտի ընծայէ այս ուղղութեամբ:

Վերոյիշեալ պատկառելի հեղինակները իրենց համոզումը կը հիմնեն Մխիթարեան Միաբանութեան Մայրավանքի Մայր Դիւանի փաստաթուղթերով, որոնց պրպտումի արդիւնքով, ստորեւ կ'ուզեմ ներկայացնել համառօտ պատկեր մը Մխիթարեան Միաբանութեան հիմնարկութեան պարագաներուն:

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՓՈՒԼՆՐ

ա.- Նախագաղափարի հասունացում

Մխիթար Սեբաստացի զանազան վանքեր շրջելէ, տարբեր հայ եւ օտար իմաստուն եկեղեցականներու հետ հանդիպելէ ետք, լուսաւոր գաղափարը կը յղանայ ստեղծելու կրօնական հաստատութիւն մը որ ապահովէր իր անդամներու գիտութիւնը, միասնութիւնը եւ յարատեւութիւնը:

«Զայնու ժամանակաւ լու եղև Մխիթարայ համբաւ իմաստութեամ եւ գովելի վարուց Խաչատրոյ վարդապետի կարմեցոյ... Խորհեցաւ երթալ գտանել զմա անդ, եւ մոյրում օժանդակութեամբ՝ զխորհուրդն գոր արկ Աս-

10 ԶԵՄՃԵՄԵԱՆ Է. Ս., Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը, Ս. Ղազար, Վենետիկ 1980, էջ 6:

11 Անդ, էջ 11:

տուած ի սիրտ նորա, հանելոյ բագում փարոզիչս մտա-
վարծս փառումունս եւ հոգեջանս ի լուսաւորութիւն
ազգիս՝ ի գործ դնել։... Հասեալ ի Կոստանդնուպոլիս
յամի Փրկչին 1697 եւ ի թուականութեան հայոց ռիթզ,
եգիտ անդ գիտչատուր վարդապետն, ... գոր իբրեւ ի
միտ էառ նա, եւ ծանեալ զկամս նորա, բացէ ի բաց
հրաժարեցաւ միաբանիլ ընդ նմա յայն գործ»¹²:

*Պոլսոյ մէջ առաջին փորձի անյաջողութեան պատճառով
Մխիթար իր քայլերը կ'ուղղէ դէպի Կարին, ուր կը յուսայ իր
ծրագիրը իրականացնել, հեռու մայրաքաղաքի դաւերէն: Կարմիր
կամ Հնձուց վանքի առաջնորդ Մարգար եպիսկոպոսին յայտնե-
լով իր մտայղացումը՝ մերժողական պատասխան կը ստանայ եւ
կ'որոշէ Պոլիս վերադառնալ եւ անձամբ իրականացնել իր երա-
զանքը:*

«Յետ այսորիկ ժամ դիպող եւ անոշան գտեալ, յայտ-
նեաց Մարգար եպիսկոպոսին զխորհուրդ միաբանու-
թեանն. խօսեցաւ ընդ նմա բագում անգամ, առաջի դնե-
լով զկարեւորութիւն գործոյն, եւ զբազմարդիւն օգուտն.
միանգամայն եւ զհանգամանս ի գլուխ զիրսն հանելոյ
Տեառն օգնականութեամբ՝ եցոյց նմա: Այլ նա ոչինչ ի-
ւիժ համոզեցաւ զիջանիլ ի կամաց նորա, երկուցեալ ի
յառնելոյ խոսութեան ի հակառակորդաց, եւ ի բաց
հանելոյ զինքն յառաջնորդութենէ անտի: Յայնժամ Մխի-
թար վարդապետն հատեալ ի նմանէ, որպէս յառաջագոյն
ի խաչատուր վարդապետէ՝ զյոյս իւր ի սպառ, եւ միայն
յամենագոր օգնականութիւն աստուածային նախախնա-
մութեան, եւ յամենօրեանալ Աստուածամօրն պաշտպա-
նութեան ապաւինեալ, հաստատեաց զմիտս իւր՝ անդրէն
ի Կոստանդնուպոլիս դարձ առնել իւրովն հանդերձ. եւ
անդ ժողովեալ զաշակերտս յամենոյ կողման ուրեք յա-
ռանձին տան մեծի ֆադաֆին, տալ ի տպագրութիւն
նպաստիւք բարերարաց գիրս հոգեշահս, եւ զխորհուրդ
իւր օգնականութեամբ Տեառն յառաջ վարել»¹³:

¹² Ա.ԳՈՆԾ, նշ. աշխ., էջ 117-118:

¹³ Անդ, էջ 133-134:

բ.- Իրագործում

Կարինէն ճամբայ ելլելով Պոլիս կը հասնի 1700 թուականի Յուլիս ամսուն, եւ իր բնակութիւնը հաստատելով Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կից բնակարաններու մէջ, իր աշակերտներուն կը յայտնէ Միաբանութեան ծրագիրը եւ միասին սկիզբ կու տան միաբանական կեանքին:

«Իսկ արդ՝ գտնա գիմնեսին լռելայն յիմքն յանկուցեալ յաշակերտութիւն, զբանն միաբանութեան յայտնէր յունկն մոցա, պատուէր տուեալ ամենայն զգուշութեամբ ի գաղտնիս սրտի պահել, եւ ոչ ումեք ի վեր հանել: Ապա խորհեցաւ ի սրտի իւրում զոմանս ի մոցանէ, որոց ընկալեալ էր զգաւագան վարդապետական, ի զանագան գաւառս սկսել ի քարոզութիւն զժամանակ ինչ, եւ յետոյ կոչել: Իսկ զայս, որոց չեւ եւս էր վարդապետացեալ, եւ ոչ զկարգ քահանայութեան ընկալեալ, կարգեաց իւրաքանչիւր ի տունս ծնողաց իւրեանց զբնակութիւն ունել, մինչեւ զտեղի ինչ անփոյժ պատշաճ միասնակեցութեան տեսչութիւնն Աստուծոյ տնտեսցէ»¹⁴:

Հ. Թումաս Սեբաստացի իր «Օրագրութեան» մէջ այսպէս կը նշէ.

«Սեբաստացի Միքիթար վարդապետ, որ է առաջին Արքահայր մեր, չուեալ ի քաղաքէն Արգրումայ, հանդերձ երիւք միաբանօք, եհաս ի Կոստանդնուպոլիս, առ ի զետեղիլ ուրեք եւ ի գործ ածել զվարդապետ քաղաքն եւ զդիտումն իւր. այսինքն՝ տալ անումն եւ զառաջացումն Միաբանութեան... Յառաջումն ամի Միաբանութեան մեռոյ... թիւ անձանց Միաբանութեան մերոյ էին իմն»¹⁵:

14 Հ. ՄԱՏԹԵՆՍ ԵՒԴՈՒԿԱՅԻ, Պատմագրութիւն կենաց եւ վարուց Տեառն Միքիթարայ Գերապայծառ վարդապետի եւ առաջնոյ Արքայի եւ հեղինակի Միաբանութեան միանձանց հայոց ի կարգէ Սրբոյն Արքայ Ամտոնի, (ձեռագիր, ընդօրինակութիւն առաջին օրինակին՝ 1736), Մայր Դիւան Ս. Ղազարի, 1756, էջ 142-143:

15 Հ. ԹՈՄԱՍ ՍԵԲԱՍՏԱՅԻ, Օրագրութիւն, (ձեռագիր) Մայր Դիւան Ս. Ղազարի, էջ 1: Տէս նաեւ ՏԱՅԻ ՍԻՄՈՆԵԱՆ Կ. ՊՕՂՈՍ, Օրագրութիւն, (ձեռագիր) Մայր Դիւան Ս. Ղազարի, որ 1700 թուականը կը նշէ որպէս «առաջին ամ Միաբանութեան»:

Մխիթարի «Համառօտ վարք»ի անծանօթ հեղինակը շատ յստակ կերպով կը նկարագրէ Պոլսոյ մէջ 1700 թուականին սկիզբ առած Միաբանութեան առաջին քայլերը.

«Մեծ բարունապետն եւ գերապատիւ Մխիթար վարդապետն մխիթարն հայկազեան տոհմիս, շնչեալ առ յԱստուծոյ՝ սկսաւ գաշակերտս ի միաբանութիւն կրօնի ժողովել ի լուսաւորութիւն ազգիս Հայոց: Վասն որոյ յամի փրկութեան մերոյ 1700, յամսեանն Յուլիսի... եկն եհաս ի Կոստանդնուպոլիս ի Խալաթիա եւ սկսաւ ժողովել գաշակերտսն, եւ թիւ միաբանելոցն եղև ութ: Վասն որոյ այս ամ եղև առաջին ամ Մխիթարեան Միաբանութեանն»¹⁶:

Մխիթար ամէն ջանք կը գործադրէ որպէսզի իր աշակերտները կարենայ Համախմբել եւ միասնաբար զբաղիլ ուսումով: Ան չէր գոհանար պարբերական հանդիպումներով եւ անհրաժեշտ կը գտնէր միասնական կեանքը:

«Ուշ եղեալ [Մխիթարայ] ի խնամս հօտին փոքու... ի վարձու կալաւ գտուն մի մեծ, ի թաղն՝ որ վերջին մասն էր ի Բերա Կոստանդնուպօլսոյ, յամսեանն Ապրիլի, յամին փրկութեան մերոյ հազարերորդի եօթնհարիւրերորդի առաջներորդի, որ երկրորդ ամ էր Միաբանութեան մերոյ»¹⁷:

Այս յայտարարութենէն աւելի յստակ եւ բացայայտ հաստատում կարելի չէր սպասել: Սակայն, հեղինակը յաջորդաբար, մինչեւ գրութեան աւարտը, իւրաքանչիւր տարուան հետ միասին կ'աւելցնէ նաեւ Միաբանութեան տարին, հաշուելով 1700 թուականէն:

«Ի շրջել այնմ ամի՝ յորժամ զգրեանց տպագրութիւնն յաւարտ ածել փոյթ առնէր, ուշ եղեալ ի խնամս հօտին իւրոյ փոքու մտախոհ լինէր՝ զամենոյս տեղի ինչ պատշաճաւոր ի ձեռս ունիլ: Զի հմար լիցի նմա գաշակերտեալսն ի մի վայր ժողովել, եւ իւրաքանչիւր մոցա

16 Համառօտութիւն վարուց Մխիթարայ Մեծի Աբբայի, ԻնԳԼԻԶԵԱՆ Է. ՎԱՀԱՆ (հրտ.), ի Հանդէս Ամսօրեայ, Կգ (1949), Թիւ 4-12, էջ 343:

17 Հ. ՄԱՏԹԷՈՍ ԵԴԻՊԿԻԱՑԻ, Ժամանակագրութիւն, (ձեռագիր) Մայր Դիւան Ս. Ղազարի, 1741, էջ 37:

զկարեւոր ուսումն մատակարարել: Մանաւանդ զի եւ զհանգամանս միաբանակեցութեան հնազանդութեամբ ընդ հրամանաւ վանահօր լինելոյ՝ բանիւք եւ իրօք ուսուցանիցէ: Արդ՝ զսոյն զայս յաղօթս իւր հայցելով ի տեառնէ միջնորդութեամբ ամէնօրհնեալ Աստուածածնին, մնայր յաջողելոյ նորա. այլեւ իւրոցն զնոյն աղօթս առնել պատուիրէ: Այն ինչ յանկ ելանէր գրոցն տպագրութիւն, եզիս՝ կալաւ ի վարձու գտուն մի մեծ ի թաղն զոր երկրին բարքառով քէլօղլու անուանեն, յամսեանն ապրիլի յամին փրկութեան մերոյ հազարերորդի եօթնհարիւրերորդի առաջներորդի, որ երկրորդ ամ էր միաբանութեան մերոյ»¹⁸:

Անծանօթ վարձագիրն ալ կը կրկնէ թէ 1701ը երկրորդ տարին էր միաբանութեան:

«Յամի Տեառն 1701, Երկրորդ ամ Միաբանութեանն, ի քաներորդ վեցերորդ ամի հասակի իւրոյ, յամսեանն ապրիլի, այն ինչ յանկ ելանել մերձենայր գրոցն տպագրութիւն, եւ ի վարձու կալաւ գտուն մի մեծ ի թաղն, որ վերջին մասն է Պերայ Կոստնադնուպոլսոյ, այսինքն խալաթիայու ի Պէյօղլուն, ուր պատրաստեաց զգործիս կազմարարութեան գրոց: Ապա զմիաբանեալսն իւր ի տուն անդր հաւաքեաց եւ սկսաւ զնոսա ուսուցանել ըստ որում իւրաքանչիւր ումեք պիտոյ էր...»¹⁹:

Միեւնոյն հեղինակը իր աշխատութեան աւարտին գետեղած «Յաւելուած»ին մէջ կը գրէ.

«Ի Յուլիսի 1700 սկսաւ ժողովել զաշակերտս, եւ եղև նոցա գլուխ մեծաւոր: Ի սեպտեմբերի 1712 կոչեցաւ Արքահայր: Յապրիլի 27, 1749 վախճանեցաւ: Արդ՝ ի յուլիսի ամսոյն 1700 թուոյն մինչեւ ի սկիզբն սեպտեմբերի ամսոյն 1712 թուոյն եւ ամբ 12 եւ ամիս 2: Իսկ ի սկզբանէ սեպտեմբեր ամսոյն 1712 թուոյն մինչեւ ցվերջն ապրիլի ամսոյն 1749 թուոյն եւ ամբ 36 եւ ամիս 8: Բոլորն ամբ 48, ամիսք 10: Այս հաշիւ է սկսեալ ի 1700 ի սկզբանէ յուլիսի ամսոյն մինչեւ ց1749, ցվերջն ապրիլ ամսոյն: Իսկ այլագգ առեալ՝ այս է հաշիւն, այ-

¹⁸ Հ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՒԴՈՒԿԻԱՅԻ, Պատմագրութիւն, նշ. աշխ., էջ 143-144:

¹⁹ Համառոտութիւն վարուց, նշ. աշխ., էջ 344:

սինգն ի 1700 ամէն մինչեւ ց1749 եւ ամբ 50: Վասն որոյ եկաց մեծաւոր գամս 12 եւ գամիսս 2, իսկ Աբբայ՝ գամս 36 եւ գամիսս 8»²⁰:

գ.- Նուիրում Աստուածամօր որդեգրութեան

Անորոշութիւններ գերազանցելով, դժուարութիւններ յաղթահարելով, խոհեմագոյն ճանապարհներ որդեգրելով հանդերձ, Մխիթար իր երազած միաբանութեան դեռ նոր ծնունդ տուած՝ կը յայտնուի հալածանքի մեծ փոթորիկին մէջ որ կը խռովէր Պոլսոյ հայկական կեանքը ժժ դարու սկիզբը:

«Այս յամսեանն սեպտեմբերի յաւուրն ութերորդի գամեանայն աշակերտեալ միաբանսն առ իւր կոչեալ անդէն ժողովէր, խորհել նոքօք հանդերձ, թէ յո՛ր կողմն աշխարհիս լաւ իցէ արդեօք երթալ. եւ գաներկեան տեղի ինչ կրօնաւորական միաբանութեամբ բնակելոյ հաստատել: Ուր ամենեցուն ի մի վայր ժողովեալ, կանոնաւոր միակեցութեամբ կեալ մարթասցին. եւ գիտութեանց ուսումն եւս ի նոսա յաջողեսցի: Սկիզբն արար գերայարգ րարունն Մխիթար՝ ջերմ աղօթիւք, յանուն Տեառն խօսիլ. եւ գայն, յորոյ վերայ հանդերձեալ էին խորհիլ, ժողովելոցն առաջի դնէր: Որպէս զի գոր ի պէտս միաբանութեան ստուգիւ ընտրեալ՝ որոշել՝ եւ ճեռն արկանել կարելոր էր, ի միտ առնուլ՝ եւ խորհել մարթասցին: Յուշ առնէր նոցա գառաջիմն, թէ յի՛նչ վախճան ժողովեալ էր գնոսա յիւր ընկերութիւնն, եւ զի՛նչ ինչ հարկաւոր էր առ այն վախճան»²¹:

Իր աշակերտները Սեպտեմբեր Տին համախմբելու նպատակը՝ ոչ թէ Միաբանութիւնը հիմնելն էր, այլ իր մտահոգութեան մասնակից դարձնել բոլորը, միասնաբար ընտրելու եւ որոշելու համար լաւագոյն տեղը՝ ուր Միաբանութիւնը անդորր պիտի վայելէր եւ պիտի կարենար աճիլ ու զարգանալ:

«Իսկ արդ՝ իբրեւ յայսվայր հասեալ խորհուրդն ի միջի հաստատիւր, յայնմ վայրի առ հասարակ միաբանութիւն ժողովոյն՝ ջերմ սիրով եւ հաստատուն յուսով զինքն ող-

²⁰ Անդ, էջ 361:

²¹ Հ. ՄԱՏԹԵՆՍ ԵԻԴՈԿԻԱՅԻ, Պատմագրութիւն, նշ. աշխ., էջ 148:

չոյն՝ Երանուհւոյ Կուսին Մարիամու Աստուածածնին յորդեգրութիւն նուիրէր, գայս օրինակ նուիրական բանից ասելով. «Ամէնօրհնեալ մա՛յր Աստուծոյ՝ Կոյս Մարիամ, ահաւասիկ մեք անարժան ծառայք քո՝ զմեզ յորդեգրութիւն աստուածամայրական գթութեան քոյ նուիրեմք: Եւ ի բոլոր սրտէ ի բազմագութ խնամս քո յուսացեալ, ահա ունիմք ի քեզ, մինչեւ ի բոլորումն առաջիկայ տարւոյս հանել զերծուցանել զմեզ յերկրէ աստի՝ եւ ի յորագայքից թշնամեաց. եւ զպատշաճեալ տեղին բնակութեան միաբանութեանս մերոյ՝ ցուցանել մեզ. եւ ի նոյն տեղի զմեզ ժողովել: Եւ մեք խոստանամք քեզ՝ եւ պարտապանս զմեզ առնեմք մշտնջենապէս յամի ամի յայսմ աւուր զմեծ գայս առանձին բարեբարութիւնս քո յիշատակել, մեծահանդէս տօնիւ տօնախմբելով զօր ծննդեան քոյ սուրբ. եւ զութօրէն նորուն: Այլ եւ յեկեղեցւոջ մերում խորան սրբոյ ծննդեան Աստուածածնիդ կառուցանել ի պատիւ քո՝ ի փառս Որդւոյ քո Միածնի, որ է օրհնեալ ի յաւիտեանս. Ամէն: Այսպիսի բանից նմանեալ աղօթիւք ընծայէին՝ նուիրէին զանձինս իւրեանց յորդեգրութիւն Երանուհւոյ Կուսին ժողովեալքն այնոքիկ ի ծառայութիւն Տեառն: Եւ իբր մի մարմին, եւ մի հոգի եղեալ Տերամք, ի մի միաբանութիւն միանային ընդ միմեանս՝ եւ ընդ գլխոյն իւրեանց, որ էր գերայարգ բարունին Միսիքար արքայ հայրն մեր: Եւ աստի եղեւ Միաբանութեան մերում շնորհօք սրբոյ Կուսին կրել զմակագիր՝ եւ զկնիքն, որ գայս ձեւ նշանագրութեան ունի. Ո.Կ.Վ.Ա.: Իսկ զոր նշանակէն, այս է. որդեգիր Կուսի վարդապետ ապաշխարութեան»: Որով տեսակն, եւ պաշտօնն իսկ միաբան լինելոյ, զոր նպաստութեամբ Երանուհւոյ Կուսին ի շնորհաց Տեառն ընկալեալ է միաբանութիւն մեր, նշանակին: Եւ հաստատութեան խորհրդոյս այս՝ եւ նուիրումն յորդեգրութիւն Երանուհւոյ Կուսին՝ եղեւ յամի փրկութեան մերոյ հազարերորդի եօթնհարիւրերորդի առաջներորդի, յամսեանն սեպտեմբերի յաւուրն ութերորդի: Եւ ամենայն միաբանեալքն ընդ բարունւոյն Միսիքարայ թուեալ, էին անձինք տասն»²²:

Միաբանութիւնը անկարագրելի եւ ճակատագրական անկէնադարձի դիմաց կը գտնուէր, եւ աստուածային նախախնամութեան ապաւինիլ՝ դիմելով Տիրամօր բարեխօսութեան՝ կրօնական կեանքի նուիրողներու համար ամենատրամաբանական քայլն էր:

«... ի սեպետեմբերի 8, զամենայն աշակերտեալ միաբանս առ իւր կոչեալ անդէն ժողովէր, խորհիլ նոքօք հանդերձ թէ յոր կողմն աշխարհիս մարթ իցէ երթալ եւ կալ յապահով տեղուց:... Ապա առ հասարակ միաբանութիւն ժողովոյն ջերմ սիրով եւ հաստատուն սիրով զինքն բոլորովին երանուհւոյ Կուսին Մարիամու յորդեգրութիւն նուիրեաց: Եւ անտի եղև Միաբանութեան մերում շնորհօքն սրբոյ Կուսին կրել զմակագիր եւ զկնիք, որ զայս ձեւ նշանագրութեան ունի. Ո.Կ.Վ.Ա. այսինքն է. Որդեգիր Կուսին. Վարդապետ Ապաշխարութեան: Եւ հաստատութեան խորհուրդս եւ նուիրումն յորդեգրութիւն երանուհւոյ Կուսին եղև յամի Տեառն 1701, ի սեպտեմբերի 8»²³:

դ.- Կանոնական հաստատում

Մխիթար ապաստան գտնելով արեւմտեան աշխարհի մէջ, իր երազած միաբանութեան հաստատութիւն եւ ընթացք տալու համար պարտաւոր էր ենթարկուիլ կաթողիկէ եկեղեցւոյ օրէնքներուն եւ գրանցուիլ որպէս վանական հաստատութիւն:

«Եւ եղև յամին երեւտասաներորդի կառուցման միաբանութեան մերոյ դարձ արար հայր Յովհաննէս վարդապետն ի Հռովմայ՝ առեալ զսահմանադրութիւն կրօնիս մերոյ սրբագրեալ ի սրբոյ ժողովոյն եւ ի սուրբ Պապէն հաւանեալ, եւ երեւ մատոյց բարունոյն մերոյ տեառն Մխիթարայ: Եւ եղև ուրախութիւն մեծ նմա եւ համօրէն միաբանիցն:... Եւ եղև այս յամին փրկութեան մերոյ հազարերորդի եօթնհարիւրերորդի երկոտասաներորդի, յամսեանն սեպտեմբերի»²⁴:

²³ Համառոտութիւն Վարուց, նշ. աշխ., էջ 346:

²⁴ Հ. ՄԱՏԹԵՂՈՍ ԵԻԴՈՒԿԻԱՅԻ, Պատմագրութիւն, նշ. աշխ., էջ 161:

Երկարատեւ քննութիւններու ենթարկելէ ետք, ի վերջոյ նորահաստատ միաբանութեան կը շնորհուի կանոնական ճանաչումը, 1712ի սեպտեմբերին, որ տասներեքերորդ տարին էր Մխիթարեան միաբանութեան:

1701 ԹՈՒԱԿԱՆԸ ՎՐԻՊԱ՞Կ

Զարմանալի է թէ ինչպէս Մխիթար Աբբաճօր վարքագիրները²⁵, որ իրենց աղբիւրներուն մէջ միշտ կը նշեն Հ. Մատթէոս Եւդոկիացիի հեղինակած Մխիթարի Վարքը եւ Միաբանութեան ժամանակագրութիւնը, այնպիսի տարակարծութիւն մը ստեղծած են որ յաջորդաբար, ընդհանուր կարծիք ձեւացած էր Միաբանութեան հիմնարկութիւնը 1701 Սեպտեմբեր 8 թուականին կապելու:

Իմ կարծիքով, այդ չփութութեան աղբիւրը Ագոնցի հրատարակած «Վարք»ն է, ուր հեղինակը հաւատարմօրէն կը հետեւի Եւդոկիացիին երբ կը խօսի Մխիթարի Պոլիս վերադարձի մասին²⁶, սակայն կը շեշտադրէ 1701 Ապրիլ ամիսը, երբ Մխիթար տուն մը կը վարձէ եւ հոն կը հաւաքուին ու միասին կը սկսին ուսումով զբաղիլ, գրականութիւնը ունենալով որպէս ծածկոյթ օտարներու աչքին: Այս թուականն է որ մատենանին

25 Այսպէս. «Ներկայ աշխատութեանս համար, բաց ի յիշեալ գրքէն Գեր. Ագոնցի, օգտուելի եմ ձեռագիր պատմութենէն վարուց Մխիթարայ Աբբայի, - զոր գրած է Հ. Մատթէոս Վ. Եւդոկիացի, որ իրեն ձեռասուն աշակերտն էր եւ ատենադպիրը, - եւ Միաբանութեանս յիսնամեայ ժամանակագրութենէն, նոյնպէս անտիպ եւ գրութիւն յիշեալ Հ. Մատթէոս վարդապետի» (ԹՈՐՈՍԵԱՆ Ի. ՅՈՎՀԱՆՆԵՍ, նշ. աշխ., էջ 6): Տէ՛ս նաեւ NURIKHAN P. MINAS, նշ. աշխ., էջ 12-18:

26 «Յորժամ Մխիթար վարդապետն եհաս ի Կոստանդնուպոլիս երկրորդ անգամ,... տեսեալ... զի խնամօք Տեառն բազմանան անձինք հոգեսէրք՝ ինքնանուէր մատուցեալք զհետ երթալ նորայն կենաց եւ վարուց, Ժողովեաց զնոսա առ ինքն, եւ յայտնեաց զխորհուրդ իւր՝ որ յաղագս միաբան ընկերութեան, պատուիրեալ՝ մի՛ ումեք յօտարաց յայտնել բնաւ... ի նմին ամի յամսեանն հոկտեմբերի՝ ձեռն էարկ ի տպագրութիւն գրոց, որպէս խորհեալն էր յառաջագոյն» (ԱԳՈՆՑ, նշ. աշխ., էջ 141-143):

կցուած Ժամանակագրական ցուցակին մէջ կը նշուի որպէս սկիզբ Միաբանութեան²⁷:

Շատ հետաքրքրական է որ Հ. Մատթէոս Եւդոկիացիի երկու աշխատութիւններուն՝ Թէ՛ վարքիմ եւ Թէ՛ Ժամանակագրութեան մէջ վարձակալութեան դրուագը պատմելու ընթացքին կարծէք յատուկէն շեշտուած է որ այդ տեղի ունեցաւ 1701ի Ապրիլին «որ երկրորդ ամ էր Միաբանութեան մերոյ»²⁸: Թէ ի՛նչ է իսկական պատճառը որ մղած է Ագոնցը այսպիսի զանցառութեամբ մը տարիով մը երիտասարդացնել Միաբանութիւնը՝ ինծի տակաւին մուկ կը մնայ: Յամենայն դէպս, կը կարծեմ Թէ ո՛չ պատահականութեան կարելի է վերագրել եւ ո՛չ ալ վրիպակ մը համարիլ...

Իսկ 1701 Ապրիլ ամիսէն անցնիլ Սեպտեմբեր 8ին, շատ հեշտ եւ միաժամանակ իմաստալից կը թուի, քանի որ մեծ է տարբերութիւնը ընդմէջ միասին բնակելուն եւ Տիրամօր նուիրուելուն:

Հետաքրքրական կը գտնեմ մէջբերել Հ. Միքայէլ Չամչեանի «Պատմութիւն Հայոց»ի մէջ հրապարակած տեսութիւնը, որ լոյս տեսած է Ագոնցի «Վարք»էն քսանչորս տարի առաջ, ուր կը գրէ.

«Ելեալ ապա յարեւելից՝ եկմ [Միթրար] միւսանգամ ի Կոստանդնուպոլիս յամի 1700, ոմիթ, եւ նստաւ ի Ժամատան եկեղեցոյ սուրբ Լուսաւորչիմ... սկսաւ ժողովել զաշակերտս, եւ մարգել զնոսա ի զգաստութիւն անարատ վարուց, եւ յիմաստս աստուածային գիտութեան... Եւ եղև թիւ աշակերտաց նորա իմն. որոց եւ յայտնեաց զխորհուրդ իւր, այսինքն թէ՛ կամի գիտաբանութիւն ինչ հաստատել, զի նովա մտցէ յազգ մեր հաստատուն կարգ գիտութեան, եւ ուսումն որջամիտ վարդապետութեան: Եւ ի յօժարիլ նոցա յայս խորհուրդ՝ առաւել եւս փութայր Միթրար վարդապետ կրթել զնոսա: Ուստի եւ վասն հոգեւորական կրթութեան նոցին, եւ վասն շահե-

27 «1701 ռճծ Ժողովեալ զաշակերտսն ի պէկօղլի ի տան միում՝ սկիզբն առնէ միաբանութեանն» (Անդ, էջ 482):

28 Հ. ՄԱՏԹԷՈՍ ԵՒԴՈՒԿԻԱՑԻ, Պատմագրութիւն, նշ. աշխ., էջ 144: Նոյն, Ժամանակագրութիւն, նշ. աշխ., էջ 37:

լոյ նաեւ գիտգիս այլոց, ետ տպագրել զգիրսն կոչեցեալ Թովմա Գեմբացի, զի ընթերցմամբ այնր գրոց վառեսցին սիրտք մոցա ի սէր աստուածային, եւ յարեամար-հուքիւն աշխարհի»²⁹:

Չամչեան, յետ պատմելու կազմարարատան վարձակալութեան մասին, լուսանցքի վրայ 1701 թուականը նշելով՝ այսպէս կ'արտայայտուի Սեպտեմբեր 8ի մասին.

«Այլ յորժամ Միսիթար վարդապետ յայսպիսի գործ՝ ձեռն արկեալ էր, եկին հասին ի վերայ նորա քաղում տառապանք... Եւ յաղագս այսորիկ հաստատեալ բանս ընդ աշակերտաց իւրոց, որք էին թուով ինն, եղ առաջի մոցա զկարգ ուխտի կրօնաւորութեան, եւ ի յանձն առնուլ մոցա, նուիրեցին զանձինս յորդեգրութիւն ամենօրեան սուրբ Աստուածածնի յաւուր տօնի հրաշափառ ծննդեան նորա ի սեպտեմբերի 8 յամի Տեառն 1701... խոստանալով յամենայն ամի զայն տօն ծննդեան ութօրեիւ կատարել, եթէ յաջողեսցի իմեանց»³⁰:

Այս տողերուն ընդմէջէն կարելի է «եղ առաջի նոցա զկարգ ուխտի կրօնաւորութեան» բառերուն վրայ հիմնուած փորձել հիմնարկութեան թուական մը տեսնել: Սակայն, այդ բառական կոպիտ բռնադատութիւն մը պիտի ըլլար, նկատի առած նախորդ մէջբերումը եւ նաեւ այն հանգամանքը որ աշխատութեան երրորդ հատորի վերջը կցուած «Ժամանակագրութեան» մէջ միայն հինգ դէպք նշուած է Միսիթարի հետ կապուած, ուր բացակայ է 1701 թուականը եւ են.

- | | |
|------|--|
| 1700 | Միսիթար վարդապետն գնայ ի Կոստանդնուպոլիս |
| 1706 | Միսիթար արքայ շինել վանս ի Մոռա |
| 1715 | Միսիթար արքայ գնայ ի Վենետիկ |
| 1717 | Սկիզբն բնակութեան Միսիթարայ արքայի իւրովքն հանդերձ ի վանս սրբոյն Ղազարու |
| 1749 | Վախճան Միսիթարայ մեծի արքայի ³¹ |

²⁹ ԶԱՄԶԵԱՆ Կ. ՄԻՔԱՅԷԼ, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Ս. Ղազար, Վենետիկ 1786, էջ 763:

³⁰ Անդ, էջ 764-765:

³¹ Նոյն, յաւելուած Ժամանակագրութիւն, էջ 101-103:

Հետեւաբար կրնանք ենթադրել որ 1786ին երբ Զամչեան իր աշխատութիւնը կը յօրինէր՝ 1700 թուականը գիտէին որպէս սկիզբ Միաբանութեան:

Այս ուղղութեամբ, պատկառելի հեղինակութիւն՝ Հ. Ղեւոնդ Ալիշանն ալ իր «Միսական» աշխատութեան մէջ, Սեւանի վանքի մասին խօսած ժամանակ, կը յիշէ.

«Հայր ուխտիս մերոյ Սեբաստացի Սարկաւազն Մխիթար, յայնժամ 18 ամաց, եկեալ այսր յուխտ, յամի 1692, արժանաւորեցաւ հրաշալի տեսեան եւ խոստման Տիրամօրն, օգնական լինելոյ աստուածասէր ըղձանացն, մինչ աղերս արկանէր առաջի պատկերի նորին... եւ քաջալերեալ՝ յաջողեցաւ նորին Տիրամօր շնորհօք հաստատել գկրօն իւր (1700), շինելով վանս՝ նախ ի Մեթոն Մոռեայ, եւ ապա (1717) ի Վեներտիկ, անուանելով զմիաբանսն Որդեգիրս Կուսիմ աստուածայնոյ, որում յամն արար զնոսա»³²:

Ուստի, Ալիշանի նման պրպտող եւ ստուգող հեղինակի աչքէն չէ վրիպած 1700 թուականը, եւ մեզի համար առեղծուածային խորհուրդ կը մնայ թէ ինչպէս Ալիշանի կենդանութեամբ պատրաստուած է Միաբանութեան հիմնադրութեան երկուհարիւրամեակը եւ նշուած 1901ին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Եզրակացնելով, պէտք է չորս յստակ հանգրուաններ զանազանել Մխիթարեան Միաբանութեան հիմնարկութեան գործընթացի զարգացման մէջ:

ա.- Նախագաղափարի հասունացում. Մխիթար, Միաբանութիւն մը հիմնելու իր գաղափարը կը յայտնէ եւ գործին առաջնորդութիւնը կ'առաջարկէ նախ խաչատուր Վարդապետին 1697ին, Պոլսոյ մէջ, եւ ապա Կարմիր կամ Հնձուց Վանքի առաջնորդ Մարգար Եպիսկոպոսին, 1699ին, Կարինի մօտ: Երկուքէն ալ մերժուելով Մխիթար կ'որոշէ անձամբ իրագործել:

բ.- Իրագործում. Մխիթար, 1700ի Յուլիսին Պոլիս կը վերադառնայ եւ իր նպատակը բացայայտելով աշակերտներուն՝ կը

32 Ա.ԼԻՇԱՆ Կ. ՂԵՒՈՆԴ, Սիսական, Ս. Ղազար, Վենետիկ 1893, էջ 88:

սկսի կրօնաւորական կեանք ապրելու նպատակասլաց աշխատանքը:

դ.- Նուիրում Աստուածամօր որդեգրութեան. Մխիթար, հալածանքներու դժուարութեան դիմաց, 1701 սեպտեմբեր 8ին իր շուրջ հաւաքելով բոլոր միաբանները, Տիրամօր յատուկ խնամքին եւ պաշտպանութեան կը յանձնէ Միաբանութիւնը:

դ.- Կանոնական հաստատում եկեղեցական իշխանութեան կողմէ. Մխիթար իր հիմնած Միաբանութեան հաստատումը եւ Սահմանադրութիւնը կը ստանայ Հռոմէն 1712ին, այսպէս, Բենեդիկտեաններու շարքին գրանցում ստանալով, ի թիւս այլ եկեղեցական միաբանութիւններու:

Դիւանային աղբիւրներու լուսարձակին տակ, այս չորս հանգրուաններէն միայն երկրորդը կրնանք համարել Մխիթարեան Միաբանութեան սկզբնաւորումը եւ 1700ի Յուլիսէն Հոկտեմբեր ժամանակահատուածը՝ անոր անվիճելի թուականը:

Հ. ՍԵՐՈՒ ՉԱՄՈՒՐԼԵԱՆ